ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
«ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

18.09.2024թ.

ՀՀ Շիրակի մարզ,Անի համայնք,

Գ.Լուսաղբյուր,4-րդ փողոց, շ.17

email - lusaghbyur-90@mail.ru

Հեռ. 094 86 28 93

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ Շիրակի մարզի <<Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի և <<Անդրանիկ Հարությունյան>>Ա/Ձ-ի(այսուհետ՝ Ընկերություն) միջև <<15>> օգոստոսի 2024թվականին կնքված պայմանագրի <<ՇՄԼՄԴ-ՄԱԱՊՁԲ-2024-2>> ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր)1.1 կետի համաձայն՝ <<Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր)սահմանված կարգով,ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվածապրանքը(այսուհետ՝ ապրանք),իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար>>:

Ա/Ձ <<Անդրանիկ Հարությունյան>> հանդիսացող ֆիզիկական անձ՝Ա. Հարությունյանի հարազատներից 13.09.2024թվականին ստացվել է պետական վկայական մահվան մասին՝ ԲԱ898682, որից պարզ է դարձել, որ սույն թվականի սեպտեմբերի 3-ին նա մահացել է, քանի որ Ա/Ձ-ի մահվան, գիտակցության կորստի, գործունակության սահմանափակման դեպքերում նրա գործունեությունը դադարում է,, ինչպես նաև Ա/Ձ-ի ձեռնարկատիրական գործունեությոմբ զբաղվելու իրավունքը իրավահաջորդության սկզբունքով չի փոխանցվում նրա ժառանգներին հետևաբար

անհնարին է դառնում վերը նշված պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման իրականացումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ <<Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի,որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս>>:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝<<Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրըհամապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված>>:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը ,ՀՀ Շիրակի մարզի <<Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի պատվիրատուի ղեկավարը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է <<Անդրանիկ Հարությունյան>> Ա/Ձ-ի հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար ամարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված ա,,գնումների գործընթացի կազմակերպման մասին>> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀՀ Շիրակի մարզի «Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ի պատվիրատուի ղեկավար՝ /Ա.Շահնազարյան/